ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

# Diocese of the Armenian Church of America

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 ✶ MURRAY HILL 6-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 31580
Փետրուար 4, 1969

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտ.

Սիրելի Հայր Արշակ,

Ստացած ենք 1969 անթուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 26ին գումարուած Ձեր ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Օպի Պաղտասարեան
Ճան Դաւիթեան
Տիրան Գրիգորեան
Տքթ. Վարդգէս Նաճարեան